ևս չելնելու նպատակով. միայն երեկոներն ու առաւօտները գնում է եղել վանք և ժամասացութիւնից յետոյ հացի և ջրի պաշարով վերադառնում իւր խուցը։ Այդ միջոցին նա նկարում է եղել Աստուածածնայ պատկերներ և միաբաններին ծախում. իւր խնդրքի համաձայն նորա մարմինը թաղել են խուցի դռան մուտքում... Վանքի միաբաններից ամենածերերը պատմում են, որ իւրեանք ոչ մի ժամանակ ոչ տեսել և ոչ էլ լսել են՝ որ դրսից ոք մին եկած լինի նորա մօտ կամ աշխարհիցն մի որ և իցէ լուր առած լինի։

—

Ն-ր -ՀԼ-ՐՀԻ Հր-Հ-ԼԻԱՆԻՐԻՆ ԴԻՆ էլ Կոլօրադոյի ահագին կանաչ լիճն է (green Lake). *որ իւր դիրքով աշխարհիս ամենաբարձր լիճն է և* 10,252 *ոտք բարձրութիւն ունի ծովի մակերևոյթից. ջուրը պարզ է որպէս բիւրեղ. ժայռերի ահագին կոյտերը և քարացած անտառի մնացորդները պարզ երևում են նորա յատակում. ծառերի տերևները, որոց մէջերում խաղում են գեղեցիկ ձկներ, կուրացուցիչ սպիտակ գոյն ունին, և կարծես թէ մարմարից լինին տաշած, շինած։ Խորութիւնը* 200 *ոտք է։*

—

Մրջ-ՆՆԻՐԻ ԻՆՔ-Ի։ *Ամերիկայում, Ալլեգանեան սարերի միջում գտնուում է մրջիւնների մի ամբողջ քաղաք, որ կազմուած է մօտաւորապէս* 1700 *հատ՝* 2—5 *ոտնաչափ բարձրութեամբ բրգաձև շինութիւններից։ Հողը ամենայն ուշադրութեամբ փորուած է և ծածկուած բոյներով և բաժանուում է երկար փողոցների, որոց մէջ ամենայն օր խռնուում են քաղաքի ամբողջ բնակիչները։ Վերջիններս շատ խաղաղ են ապրում միմեանց հետ, միայն երբեմնակի օտար մրջիւնի երևան գալը շփոթում է նոցա խաղաղութիւնը, որին նորա ընդհանուր ոյժերով դէմ են գնում...։*

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

—

Ի 24 Յունվարի 1883 ամի. Ս. Սինոդս ըստ խնդրանաց Անդամոյ Սրբին Գերդ. Գրիգոր Եպիսկոպոսի Տ. Մատթէոսեան խնդրեալ է զանօրէնութիւն կառավարչի Գըլխաւոր կառավարութեան վասն հայցելոյ զԲԱՐՁՐԱԴՈՅՆ լուծումն առ ի Յոյլատրելոյ նմա զվեցամսեայ արձակուրդ յարտասահման ի գիւտ առողջութեան, առ որ եւ միջոցաւ Գլխաւոր Կառավարութեան յայսկոյս Կովկասու՝ ստացեալ է ԲԱՐՁՐԱԴՈՅՆ կամօք զՅոյլատուութիւն, վանորոյ հրամայեցին. — ունելով ի նկատի զբոանեալեց-

ամենայ միաբանակցութիւն Անդամոյ Սինոդի Գեր. Գրիգոր Եպիսկոպոսի եւ գասանեւ-հինգամեայ հաւատարիմ եւ ջերմեռանդն պաշտօնավարութիւնս Նորա Թէ ի պաշտօնի Նախանդամոյ Կոնսիստորիային Երեւանայ, Թէ ի զանազան յանձնարարութիւնս Ծայրագոյն Հոգեւոր Իշխանութեան եւ Թէ յանդամակցութեան Սինոդի, ընդ նմին եւ զցաւալի անձնական տկարութիւնն, Սինոդս ըստ ամենայնի արժանի համարի օժանդակել նմա ի թեթեւութիւն ծախուց ճանապարհորդութեան յարատասանման եւ ի զարման դեղարէից եւ բժշկութեան, նշանակել նմա կեռազար ռուբլիս, յորոց հրեգ հարիւր ռուբլիս ի վիճակային գումարաց Թեմին Ղարաբաղու, եւ զեռեգ հարիւր ռուբլիս ի վիճակային արդեանց Թեմին Ցփխիսու. Բ. Համաձայն ԲԱՐՁՐԱԳՈՅՆ յուծման ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԵՐ տալ Նորին Գերապատուութեան զվեցամսեայ արձակուրդ մնալոյ յարատասանման ի գիւղ առաջուութեան՝ տալով նմա ի Սինոդէս զպատշաճաւոր վկայական առ ի ըստ այնմ պահանջելոյ ի Նահանգապետէն Երեւանայ զօտարատանման անցագիր վերադարձեալ ժամանակաւ վասն անարգել գնալոյ յարատասանման եւ վերադառնալոյ հանդերձ ծառայիւ եւ Բ. Զանուն Նորին Գերապատուութեան՝ ցուցանել յօրագրութիւնս Նորին բացակայ ի 1 էն Մարտի 1883 ամի:

Ի 4 Փետրուարի 1883 ամի. Սինոդս հրամանագրութեամբ իւրով յ 31 Մարտի 1876 ամի պատուիրեալ էր Կոնսիստորիային Երեւանայ զթի նարիւր յիսուն ռուբլիս՝ գինս փորագրութեան ինքոյ առեւաւ յայնմամեան գանձապահէ իւրոյ խաչատուր քահանայէ Բարախանեան առանց հրամանի Սինոդիս եւ Կոնսիստորիայի՝ առանց յեռածգութեան յեռս պահանջել ի նմանէ եւ լրացուցանել զաճառապատկան գումարս, այլ, որպէս երեւի ի գործոց Սինոդիս, յիշատակեալ քահանայն չէ առաջարկեալ զպահանջեալ 151 ռուբլիսն, վասնորոյ հրամայեցին հրամանագրել Կոնսիստորիային Երեւանայ՝ զխաչատուր քահանայն Բարախանեան արգելուլ ի քահանայագործութենէ եւ առաքել ի վանս Սեւանայ յապաշխարութիւն անսաստման ժամանակաւ. իսկ գծխական ժողովուրդս նորա յանձնել ի հովուութիւն ընկերակցի նորա, եւ զմի մասն արդեանց նորա գոյացելոց ի ծխոց նորին տալ յապրուստ ընտանեաց նորա, զերկրորդն առաքել ի Սինոդս ցլրումն 151 ռուբլի պահանջից ի նմանէ եւ զերրորդն տալ յօգուտ Հոգեւոր դպրոցի տեղւոյն:

Ի 15 Փետրուարի 1883 ամի. Գտանելով Սինոդս զբոլոր ժողովրդականաց Երեւան քաղաքի եւ հայ աշակերտաց գեմնազիոնի տեղւոյն ըստ ամենայնի իրաւացի Թէ՝ խաչատուր քահանայն Բարախանեան է անընդունակ եւ անհամապատասխան ուսուցչական պաշտօնի, ուստի հրամայեցին արգելուլ զխաչատուր քահանայն ի քահանայագործութենէ նախ՝ վասն նախասպէս չստանալոյ զհաւանութիւն Հոգեւոր Իշխանութեան ի վարումն ուսուցչական պաշտօնի յարբունի ուսումնարանի եւ երկրորդ՝ վասն անընդունակութեան նորա յուսուցչական պաշտամուն, եւ ի տեղի նորա նշանակել գծխական քահանայն Ս. Պօղոս եւ Պետրոս Եկեղեցւոյն Երեւանայ զՄկրտիչ քահանայն Տ. Մկրտչեան, որ, որպէս յայտնի է Սինոդիս՝ իւրով վարուք եւ բարուք եւ հմտութեամբ ի գիտութիւնս Հայոց լեզուի, կարէ վարել զպաշտօն ուսուցչութեան ի գեմնազիոնին մեծաւ յառաջադիմութեամբ.